ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի և *(Կազմակերպությունը)* միջև

ք. Երևան «--» ----2019թ.

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի այսուհետ՝ (Հանձնաժողով) և Հայաստանի *(կազմակերպությունը)* միջև:

- ✓ **Հաշվի առնելով** արդի փուլում մեր երկրի առջև ծառացած մարտահրավերներին դիմագրավելու համապատասխան մասնագիտական կարողությունների ձևավորման, ՀՀ բյուջետային օրենսդրության կատարելագործման և ֆինանսատնտեսագիտական միտքն իրական քաղաքական գործընթացների մեջ ներգրավելու անհրաժեշտությունը:

- ✓ **Համոզված լինելով**, որ գիտականորեն հիմնավորված օրենսդրական ակտերի ընդունումն անհրաժեշտ հիմքեր կստեղծի դրանց գործնական կիրառման արդյունավետության բարձրացման համար

- ✓ **Բարձր գնահատելով** Հայաստանի Հանրապետության (*կազմակերպությունը)* մասնագիտական ներուժը՝

- ✓ **Արժևորելով** գիտության ու պրակտիկայի միջև կապ հաստատելուն և ՀՀ բյուջետային օրենսդրության կատարելագործմանն ուղղված կողմերի միջև արդյունավետ համագործակցությունը

- ✓ **Ճանաչելով** Հայաստանի (*կազմակերպությունը)*, որպես ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի փորձագիտական և խորհրդատվական անկախ գործընկեր կառույց, կողմերը որոշեցին կնքել սույն Հուշագիրը' հետևյալի մասին

Համագործակցության նպատակը և ուղղությունները

Սույն Հուշագրի նպատակն է ապահովել անհրաժեշտ համագործակցություն Հայաստանի Հանրապետության ֆինանսատնտեսագիտական մտքի, փորձագիտական ներուժի և տնտեսական քաղաքականության մշակման պատասխանատուների միջև' նպաստելով ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեության և վերահսկողական ֆունկցիայի արդյունավետության բարձրացմանը:

Այդ նպատակով կողմերը մտադիր են օգտագործել բյուջետային, ֆինանսատնտեսական ոլորտում քաղաքականության մշակման գործում ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին օրենքով վերապահված դերակատարումը և գործնականում վեր ածել այն բանավեճի և երկխոսության յուրատեսակ հարթակի՝ բյուջետային վերահսկողության արդյունավետության, հասարակության ֆինանսական գրագիտության բարձրացման, Ծրագրային բյուջետավորման և այդ ոլորտի գիտական շրջանակների, փորձագիտական հանրության, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և ֆինանսական քաղաքականության մշակման պատասխանատուների միջև:

Նախատեսվում է համագործակցությունն իրականացնել հետևյալ Ուղղություններով՝

- Ծրագրային բյուջետավորման լիարժեք ներդրումը Հայաստանում՝
- Բարձրագույն աուդիտորական մարմնի (ԲԱՄ) և ԱԺ-ի արդյունավետ համագործակցություն
- Պետական ֆինասների կառավարման համակարգի բարեփոխումներ (ՊՖԿՀ)
- Հանձնաժողովի գործունեության ոլորտին առնչվող թեմատիկ և հանրային լսումների, սեմինարների,աշխատանքային քննարկումների և այլ գիտագործնական միջոցառումների համատեղ կազմակերպում:

Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմնադրական օրենքով հանձնաժողովի իրավասությանը վերապահված հարցերին կամ գործունեության ոլորոներին առնչվող իրավական ակտերի և փաստաթղթերի փորձագիտական, հետազոտական

ուսումնասիրությունների, ըստ անհրաժեշտության կարող են ներգրավել նաև (կազմակերպությունը) և այլ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները:

Համագործակցության պայմանները

Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում հանձնաժողովն ապահովում է երկրում բյուջետային և ֆինանսական քաղաքանանությանը վերաբերող հայեցակարգերի, ծրագրային փաստաթղթերի, օրենքների, օրենքների նախագծերի և դրանց կից փաստաթղթերի տրամատրումը կազմակերպությանը, ապահովում է հանձնաժողովի կողմից հրավիրված նիստերին, խորհրդարանական լսումներին, աշխատանքային խորհրդակցություններին և այլ ձևաչափերով քննարկումներին կազմակերպության փորձագետների մասնակցությունը:

(Կազմակերպությունը) ներկայացմամբ հանձնաժողովին կից գիտափորձագիտական խորհրդի (աշխատանքային խմբի) կազմում կարող են ընդգրկվել փորձագիտական ներուժ ունեցող մասնագետներ:

Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում փորձագիտական հետազոտություն կամ ոլորտային ուսումնասիրություններ իրականացնելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև կազմակերպությունը:

Միաժամանակ ՀՀ ԱԺ-ը և մասնավորապես ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը պատրաստակամ է ընդունել ուսանողներին տարատեսակ պրակտիկաների և ուսումնասիրությունների իրականացման համատեքստում: Կարծում ենք այն գիտելիքների պաշարը, որը նրանք կստանան այս շփումների ընթացքում էլ ավելի կմեծացնի հնարավորությունները աշխատաշուկա սահուն անցման համար:

Հուշագրի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը

Սույն Հուշագիրն ուժի մեջ մտնում է ստորագրման պահից:

Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Սույն Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով	Կազմակերպության անվանումը
Հանձնաժողովի նախագահ՝	**Կազմակերպության ղեկավար՝**
Մանե Թանդիլյան	**----------**
Ստորագրություն --------	Ստորագրություն ----------